

ԴԻՊԿԱԾԱՅԻՆ ԴԱՐՉԿԱԾԱՅԻՆ ՄԻԱԿՈՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Դարձվածային միավորների (ԴՄ) *ոճական* բնութագիրը դարձվածաբանության որպես լեզվաբանական գիտակարգի բաղկացուցիչ մասն է: ԴՄ-ների իմաստային կառուցվածքը կազմող երեք *քերականական, հիմնանշանական-նշանական* (դենոտատիվ-սիգնիֆիկատիվ) և *ոճական* իմաստներից, առավել շատ վիճարկումների արժանացել է վերջինը: Զժխտելով ԴՄ-ների իմաստային կառուցվածքում նշանակության *ոճական* բաղադրիչի՝ որպես «երկրորդային կազմության լեզվական նշանի» անհրաժեշտ և պարտադիր լինելը (տես Чернышева И. И., 1977), լեզվաբանները այդ հասկացությունը մեկնաբանում են ոչ միանշանակ և գործածում են տարբեր եզրույթներ այն անվանելու համար՝ *առնշանակություն կամ հարառնանակություն (կոնոտացիա), հարիմաստ, ոճական երանգավորում* և այլն¹:

ԴՄ-ների առնշանակային իմաստ և նշանակության *ոճական* իմաստ եզրույթները հաճախ լեզվաբանական գրականության մեջ գործածվում են որպես հոմանիշներ. մասնատիպ են նաև այն իմաստույթները, որոնք առանձնացվում են ԴՄ-ների առնշանակային բաղադրիչի կազմում՝ *արտահայտչականություն, հուզա-գնահատողական տարրեր և գործառնական բնութագիր* (տես Кухин А. В., 1976): ԴՄ-ների նշանակության *ոճական* բաղադրիչ ասելով հասկանում ենք *արտահայտչականության, հուզականության, գնահատողականության առնշանակային բաղադրիչների և գործառնական պատկանելության* «ֆրագմենտներ» /Յու. Յու. Ավալիանիի եզրույթը/ փունջը: Յուրաքանչյուր ԴՄ-ի իմաստաբանության մեջ այդ ֆրագմենտները կարող են ներկայանալ համատեղ, զույգային համակցությամբ կամ առանձին-առանձին: Նման դեպքերում ԴՄ-ը լինում է *ոճապես* նշույթավորված: Ոճական ֆրագմենտները կարող են ունենալ նաև զրոյական արտահայտություն, և այդ դեպքում ԴՄ-ը *ոճապես* չեզոք է: Այսպես, *ոճական* նշանակությունը հանդես է գալիս որպես լրացուցիչ իմաստ կամ հարիմաստ, և ԴՄ-ի *ոճական* նկարագիրը նրա իմաստային կառուցվածքի մի իմաստույթն է, իսկ ԴՄ-ները պատկերավոր արտահայտություններ են՝ լրիվ կամ մասամբ վերաիմաստավորված բաղադրիչներով, և նրանցից շատերին հատուկ է արտահայտչականությունը և հուզականությունը²:

Լեզվաոճական առանձնահատկությունները հատուկ են բոլոր ԴՄ-ներին, և կարելի է առանձնացնել երկու տիպի ԴՄ-ներ՝ 1/ *չեզոք-արտահայտչական (ուները թոթվել, ծեռք-ծեռքի, անգլ. shrug one's shoulders; hand in*

hand և այլն) և 2/ *հուզարտահայտչական*, որոնց, բացի արտահայտչականությունից, հատուկ է նաև այս կամ այն հուզական երանգավորումը՝ դրական, բացասական, հեզնական, հանդիսավոր, կատակային, մեղմասացական և այլն (*խելքի պոտուկ, աչքիս լույսն է, անգլ. the apple of one's eye; a sight for sore eyes; an ass in a lion's skin* և այլն):

Որոշ ՂՄ-ների (*մատը խառը լինել, ձեռք ձեռքի, hand over fist* կամ *hand over hand* և այլն) հատուկ է զգացմունքային ինչպես դրական, այնպես էլ բացասական երանգ: Այս ՂՄ-ների պոտենցիալ հնարավորությունները իրացվում են համատեքստի ոճական երանգավորմանը համապատասխան: ՂՄ-ների հուզական երանգավորումը կարող է լինել բացահայտ/արտակա և ներակա: Այն կարող է փոխվել նաև ժամանակի ընթացքում. դրական երանգավորումը կարող է փոխվել բացասականի և հակառակը: ՂՄ-ների բնութագրող գործառույթը սերտորեն կապված է նրա գնահատողական գործառույթի հետ: Ընդ որում, վերջին տարիների ուսումնասիրությունները ի հայտ են բերել մի հետաքրքիր ընդհանուր միտում տարբեր լեզուներում. ՂՄ-ների գերակշռող մեծամասնությունն ունի բացասական գնահատողական բնույթ³: Այսպես, բնութագրելով և գնահատելով մարդու մտավոր հնարավորությունները, մենք ասում ենք՝ *գլխով մարդ, լուսավոր ուղեղ* և այլն (հնարավոր է, որ դրական այս բնութագրերից որևէ մեկը ունենա հեզնական երանգ, և այդ ՂՄ-ը կդասվի արդեն այլ խմբի): Մարդկանց մյուս խումբը բնութագրելու համար արդեն գործածվում են շատ ավելի թվով ՂՄ-ներ՝ *դդում գլուխ, գլխում քամի է, ծակ գլուխ, մազը երկար խելքը կարճ* և այլն:

Այսպիսով, այն փաստը, որ ՂՄ-ներին հատուկ է առնչականային իմաստը, որ նախանշում է ՂՄ-ի ոճական երանգավորումը, դրանց հուզարտահայտչական կողմը, ընդունված տեսակետ է: Ավելին, տարածում է ստանում այն տեսակետը, որ հուզականությունը և արտահայտչականությունը իմաստային կառույցի գերիշխող տարրերն են: ՂՄ-ների հուզարտահայտչական հատկանիշները նախանշվում են հենց ՂՄ-ների էությանը, նրանց իմաստային երկպառանգությամբ և «ներքին ձևի ներշնչվածությամբ» (Буторадов В. В., 1977): ՂՄ-ների արտահայտչականության և հուզականության ձևավորման խնդրում առաջնային դեր ունեն իմաստային-ոճական տարրեր միջոցները (փոխաբերություն, փոխանունություն, համեմատություն, պատկեր-խորհրդանիշ և այլն):

Բացի նորմատիվ արտահայտչամիջոցներից, կան նաև *դիպլոմատային* արտահայտչամիջոցներ, որոնք օգտագործվում են ՂՄ-ին առավել արտահայտչականություն հաղորդելու, հուզական երանգավորում ստեղծելու կամ հուզարտահայտչական ՂՄ-ներում հուզական երանգավորումը փոփոխելու

համար: Ղիպվածային ՂԱ-ները սերտորեն կապված են ՂԱ-ների տարածնա-վորվածության հետ և իրացվում են տարբեր տիպի համատեքստերում:

Դարձվածների թարմացման հիմնական ոճական ղիպվածային հնարան-երից են 1/ ոճական բաշխման (դիստրիբուցիա) խախտումը, այսինքն, ՂԱ-ի առարկայական հարաբերակցության «վերահասցեագրումը» և սովորական համամասնության փոփոխությունը (տես Морозовский А. Н., 1961, с. 225), 2/ ՂԱ-ի գործառության ոլորտի փոփոխությունը, 3/ ՂԱ-ի գործածությունը իրեն ոչ բնորոշ նշանակությամբ, օրինակ, անտիֆրագիսը, այսինքն ՂԱ-ի գործածու-թյունը հակառակ իմաստով, 4/ բաղարկությունը (կոնտամինացիան), այսինքն, երկու կամ ավելի ՂԱ-ների միացումը մեկ արտահայտության մեջ, 5/ ՂԱ-ների ղիպվածային հականիշի ստեղծումը, 6/ ՂԱ-ների ղիպվածային հոմանիշի ստեղծումը, 7/ ՂԱ-ի բաղադրիչների փոխատեղումը, 8/ ընդմիջարկումը, 9/ մի քանի ՂԱ-ների օգտագործումը նեղ համատեքստում և այլ միջոցներ:

Գրողները, ակտիվ ստեղծագործական վերաբերմունք դրսևորելով լեզվի նկատմամբ, իրենց խոսքը ինքնատիպ, թարմ միջոցներով արտահայ-տելու պահանջով երբեմն զանազան փոփոխություններ են կատարում ՂԱ-ների կազմում կամ իմաստում:

Օրինակ, Սարոյի հոգեվիճակն ավելի բնորոշ ձևով արտահայտելու համար, *սրտից արյուն կաթել* կազմախոսական ՂԱ-ում թումանյանն ավելացրել է «սևակնած» բառը «*Արյուն է կաթում սևակնած սրտից*» Գընում է ըշտապ, քայլերը մոլոր»: (ՀԹ)

Կամ *բկին չոքել*: *փորումը մեկ այբի կտոր չգտնել* ՂԱ-ներն օգտագործվել են հետևյալ ընդմիջարկումներով «*Աշխարհի բկին չարով մի չոքիր* նա է գրելու մեզ տապանագիր»: (ՀՇ); «Ու շատի *փորումը*, հինգ օր ման գաս, *մեկ այբի կտոր չես գտնիլ*»: (ԽԱ)

Դարձվածներում կարող են փոխվել նաև բաղադրիչների շարադասու-թյունը *սրտից արյուն կաթել-արյուն է կաթում սրտից, լեզուն կապ ընկնել-կապ ընկավ լեզուն* և այլն:

Թումանյանը խմբագրել է՝ *սերը սուր է դարձել, արհմը՝ ջուր* (Ա. Դանալանյան, Առածանի, 1960, էջ 24) ժողովրդական դարձվածը, որը ձեռք է բերել իմաստային նոր նշանակություն՝ «Դարձել է աշխարհը, ախպեր, առ ու փախ: *Սերը դարձել է սուր ու ջուրը-արհմ...*»: (ՀԹ)

Իսահակյանը *սիրտը բաց* (զվարթ, ուրախ) դարձվածը օգտագործել է նոր՝ *կարոտով, սիրով, քերմությամբ* իմաստով՝ «Ախ, ճակատս հոգնած ո՞վ շոյե պիտի: Եվ ո՞ւմ *սիրտն է բաց* այս հեռու, օտար ափում ինձ համար» (տես Առաքելյան Վ., 1954):

Պոռչյանը *ոտն իր կարպետի համեմատ մեկնել* դարձվածը գործածել է հետևյալ ձևով՝ «Ես ի՞նչ անեմ, խի՞ չի իր *ոտն իր կարպետին մեկնում*, իր չափը ճանաչում, իր երեսի ջրովը հեռանում»։ (ՊՊ)

Անգլերենում գրողների կողմից օգտագործված դիպվածային ՂՄ-ների օրինակներ են՝ "The rubies shone with deep lustre-red, red as *heart's blood*, ardent as flame." (E. M. Dell); "He moved in the intellectual circle, he read Browning with enthusiasm and *turned his wellshaped nose*." (S. Maugham); "In the later years of the war, and just after, *butter wouldn't melt in their democratic mouths*." (J. Lindsay); "I won't have Ralph upset after all", she grinned, "a husband *in the hand is worth two in the bush*." (C. P. Snow); "And so. In a sense, the affair, no matter what happens out there tonight, will still be in the family: *the skeleton (if it be a skeleton) still in the closet*." (W. Faulkner); "Did *one bad turn deserve another?*" (U. Sinclair); "Jamie...We've been more than brothers. You're the only pal I've ever had. *I love your guts*." (E. O. Neill); "Old *my foot*, I'm in the prime of life and fat *my other foot*, I've lost twenty pounds since I got back in the Army." (S. Maugham)

Անհատական-հեղինակային կայուն կապակցությունների պոտենցիալ դարձվածային միավորների ստեղծումը համեմատաբար սակավ հանդիպող երևույթ է (խոսքը ոչ թե լեզվում արդեն գոյություն ունեցող դարձվածների նորացման, փոփոխման արդյունք՝ դիպվածային ՂՄ-ների մասին է, այլ գրողի ստեղծագործական արարման արդյունքում ստեղծված ՂՄ-ների)։ Նույնիսկ հեղինակային ստեղծագործության արդյունք միանգամայն նոր ու ձևափոխված միավորները հենվում են լեզվում արդեն կայացած բառակապակցությունների և նախադասությունների առավել տիպական կաղապարների վրա հագեցնալով միայն նոր բառերով և նոր բովանդակությամբ։ Իսկ գրողների ստեղծած միանգամայն նոր գոյացությունները միշտ չէ, որ մտնում են շրջանառության մեջ և դառնում համագործածական։

Այսպիսով, հայերեն և անգլերեն ՂՄ-ներին հատուկ է ինչպես հիմնանշանակային, այնպես էլ հարանշանակային իմաստ, որի բաղադրիչներն են արտահայտչականությունը, հուզականությունը (որին հաճախ ուղեկցում է զնահատողականությունը) և ռեական բնութագիրը։ Դիպվածային կազմախոսական ՂՄ-ների կիրառությունը երկու լեզուներում էլ միտված է դարձվածին արտահայտչական լրացուցիչ նրբերանգներ հաղորդելուն։

Ծանոթագրություններ

1. Ինքը, *առնշանակություն (կոնոտացիա)* եզրույթը չունի միասնական սահմանում լեզվաբանական գրականության մեջ: Առնշանակային իմաստ ասելով, լեզվաբանները հիմնականում նշում են «հիմնառնշանակային իմաստի հանդեպ լրացուցիչ իրազեկումը, որն հավելում է լեզվական միավորը ՊԱ-ին բնորոշ հուզարտահայտչական տարրերի համակարգով» (տես Аухованова Т. В., 1978):
2. Արտահայտչականություն հասկացության մասին միասնական կարծիք չկա: Կ. Ա. Դոլինինը համատեղում է արտահայտչականություն և հուզականություն երևույթները. «Արտահայտչականությունը լեզվական նշանի այնպիսի հատկություն է, որի շնորհիվ լեզվական այդ նշանը ընկալվում է անմիջականորեն ազդելով ընկալողի երևակայության, հուզական ոլորտի վրա (տես Долинин К. А., 1978, с. 120): Օ. Ս. Սխմանովան այլ կերպ է բնորոշում արտահայտչականությունը. «экспрессия»-ն խոսքի արտահայտչական-գեղանկարող (изобразительный) միջոցներն են, որ խոսքին պատկերավորություն և հուզական երանգ շնորհելով, տարբերում են այն սովորական (կամ ոճականորեն չեզոք) խոսքից» (տես Ахманова О. С., 1980):
3. Այս երևույթը, թերևս բացատրվում է հանրահոգեբանական գործոններով, այն, ինչը լավ է, դրական, համարվում է ամրագրված արժեք, կանոն, և ավելի քիչ է հետաքրքրում մարդկանց, իսկ ինչը շեղում է կանոնից, ունի դրսևորման անենատարբեր ձևեր, որն էլ ընկած է ՊԱ-ների պատկերային հիմքում:

Գրականություն

1. Авалиани Ю. Ю., К сопоставительной стилистике фразеологических единиц (на мат. образно-символических заголовков худ. произв). Проблемы лингвостилистического анализа (сборник научных трудов). М., 1985.
2. Ахманова О. С., Словарь лингвистических терминов. М., 1980.
3. Виноградов В. В., Основные понятия русской фразеологии как лингвистической дисциплины. В кн. Избранные труды. Лексикология и лексикография. М., 1977.
4. Долинин К. А., Стилистика французского языка. Л., 1978.
5. Кунин А. В., О стилистическом контексте во фразеологическом ракурсе. Сб. науч. трудов МГПИИЯ им М. Тореца. Вып. 103, М., 1976.
6. Лиховидова Т. В., Фразеологическое толкование коннотативного аспекта значения фразеологических единиц. АКД. М., 1978.
7. Лукьянова Н. А., Экспрессивность в системе словаря и речи // Человеческий фактор в языке: Языковые механизмы экспрессивности / Ин.-т языкознания, 1991.
8. Мороховский А. Н., О природе эмоциональной окрашенности фраз. ед. Англ. языка. Труды Самарканд. гос. ун. им. А. Навои. // Вопросы фразеологии. Новая серия. Вып. 106. Самарканд, 1961.
9. Чернышева И. И., Актуальные проблемы фразеологии. Вопросы языкознания. 1977. # 5.
10. Fahraus A., Syntactic-semantic Value-loading in English. Copenhagen, 1980.